ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28.02.2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա.Սահակյան)

1.1 Հաշվի առնելով Eauction համակարգում ի հայտ եկած խնդիրները և դրանց վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի 22.02.2019թ. 01.1/26-12727-19 գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց որակավորման կամ որակավորման շտկման փաստաթղթերը առաջին տեղ գբաղեցրած մասնակիցներից պահանջել հանձնաժողովի քարտուղարի՝ **a.sahakyan@mil.am** էլեկտրոնային փոստի միջոցով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործնթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ և 47-րդ կետերի պահանջներին համապատասխան:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված "Էլեկտրոնային աճուրդի իրականացման" կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին եզրակացության համաձայն՝ **«Նաիրի-Ալանիկա», «Մի**

վնասիր» և «Կուրացիո» ՍՊԸ-ները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չեն ունեցել: *Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:*

1.2 Սույն ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն և հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի՝

ա) **«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի** կողմից՝

- ներկայացված Հավելված 3-ում սխալ է նշված մասնակցի անվանումը,
- 8, 23, 54 և 61-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում են ապրանքների՝ Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրերի (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները), արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագրի (ISO, GMP, CE Mark կամ այլ), արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագրի, նշված փաստաթղթերի (պատճենների)՝ մատակարարման ժամանակ ներկայացնելու, ինչպես նաև պիտանելիության ժամկետի (այն ունենալու դեպքում) մասին տեղեկատվությունը:
- 8-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում տրախեոստոմիկ փողի խողովակի անկյունը նշված է 95^0, մինչդեռ հրավերով պահանջվում է 105^0, ինչպես նաև նշված չի հրավերով պահանջվող գերփափուկ մանժետի առկայության մասին տեղեկատվությունը:

Նշված անհամապատասխանությունների վերաբերյալ առկա է սույն ընթացակարգի գնման հայտը նախագծող անձի մասնագիտական եզրակացությունը, որը կցվում է սույն արձանագրությանը:

բ) **«Մի վնասիր» ՍՊԸ-ի** կողմից՝ 11 և 46-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում է ապրանքների՝ Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրերի (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները), արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագրի (ISO, GMP, CE Mark կամ այլ), արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագրի, նշված փաստաթղթերի (պատճենների)՝ մատակարարման ժամանակ ներկայացնելու, ինչպես նաև պիտանելիության ժամկետի (այն ունենալու դեպքում) մասին տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը կասեցրեց նիստը, և հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցեց առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Վերոնշյալ մասնակիցները սահմանված ժամկետում շտկեցին նշված անհամապատասխանությունները, բացառությամբ **«Նաիրի Ալանիկա» ՍՊԸ-ի** կողմից 8-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրին վերաբերող անհամապատասխանությանը:

1.3 04.03.2019թ. կայացած նիստում, հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, հանձնաժողովը որոշեց **«Նաիրի-Ալանիկա», «Մի վնասիր» և «Կուրացիո» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը և հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին 1-ին տեղեր զբաղեցնող մասնակիցներ, իսկ **«Նաիրի-Ալանիկա»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 8-րդ չափաբաժնի մասով հանձնաժողովի կողմից գնահատվեց անբավարար և մերժվեց, քանի որ նշված մասնակիցը արձանագրված անհամապատասխանությունը չէր շտկել:

1.4 Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց 8-րդ չափաբաժնի մասով սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Կուրացիո» ՍՊԸ-ին:

1.5 Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով վերջինիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սահակյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել «Կուրացիո» ՍՊԸ-Ի կողմից 8-րդ չափաբաժնի մասով հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Նազարյան
Գնահատող		Վ. Վահանյան
Գնահատող		Մ. Գալստյան
Գնահատող		Հ. Ավետիսյան
Գնումները համակարգող		Ա.Սահակյան

19/372
20.02.19.

ՀՀ ՊՆ ՆՏԱԴԷԱՃԱՊՁԲ-9/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության կարիքների համար անհրաժեշտ բժշկական պարագաների ձեռք բերման համար կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴԷԱՃԱՊՁԲ-9/26 ծածկագրով գնման ընթացակարգում 8, 23, 54, և 61-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած «Նաիրի ալանիկա» ՍՊ ընկերության որակավորման փաստաթղթերը պարզվեց հետևյալը.

8-րդ չափաբաժին՝ առաջարկված տրախեոստոմիկ փողի [illegible] անկյունը կազմում է 95° հրավերով պահանջված 105°-ի փոխարեն, ինչպես նաև նշված չի պահանջված գերփափուկ մանժետի առկայության փաստը: Նշված անհամապատասխանությունների արդյունքում ընկերության կողմից առաջարկված ապրանքատեսակը **համարժեք համարվել չի կարող**, քանի որ, մարդու պարանոցի անատոմիական թեքության աստիճանը կազմում է մոտ 100-108° և պահանջված 105°-ը թույլ է տալիս խուսափել հնարավոր բարդություններից կապված տրախեոստոմիկ փողի [illegible] դեպքում նրա դիստալ ծայրի տրախեայի պատի հետ շփման արդյունքում: Նշված հանգամանքը հաշվի առնելով տրախոստոմիկ փողեր արտադրող ընկերությունների մեծամասնությունը արտադրում է հենց 105° անկյուն ունեցող փողեր:

23 և 54-րդ չափաբաժիններ՝ պահանջված 213 սմ երկարությամբ թթվածնային խողովակի փոխարեն մասնակիցը առաջարկել է 210 սմ երկարության խողովակ, որը կարելի է համարել համարժեք, քանի որ 3 սմ [illegible] անհամապատասխանությունը տվյալ դեպքում բացասական [illegible] ապրանքատեսակի կիրառման վրա: Սակայն մասնակիցը առաջարկված

Ծանոթ [illegible]
20.02.2019թ.

ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում չի նշել հրավերով պահանջված կոր ծայրերի և ամրացման երիզների առկայությունը:

61-րդ չափաբաժին՝ մասնակցի կողմից առաջարկված ապրանքատեսակի անվանումից հնարավոր չի եզրակացնել թե կոնկրետ որ ապրանքատեսակն է առաջարկվում, առաջարկվող ապրանքատեսակը ստերիլ է թե ոչ, ինչպես նաև տեխնիկական բնութագրում նշված չի հրավերով պահանջված թթվածնի միացման պորտի առկայության մասին տեղեկատվությունը:

Նշված բոլոր չափաբաժիններում մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը համապատասխան երկրներում գրանցման, անհրաժեշտ հավաստագրերի առկայության ինչպես նաև պիտանելիության ժամկետների և մատակարարման ժամանակ ներկայացվող փաստաթղթերի վերաբերյալ:

Առաջարկում եմ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի և «Նաիրի-Ալանիկա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի նշված անհամապատասխանությունների վերաբերյալ մասնակցին առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

ԳՆՄԱՆ ՀԱՅՏԸ ՆԱԽԱԳԾՈՂ

ՀՀ ԶՈՒ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՏԱԲ ՊԵՏ

բ/ծ փոխգնդապետ Վ. ՎԱՀԱՆՅԱՆ

20.02.2019թ.

1409ա
20 02 19